Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
դեկտեմբերի 22 -ի N 822 - Ա
որոշման

ԴԻԶԵԼԱՅԻՆ ԳԵՆԵՐԱՏՈՐՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Արցախի Հանրապետության կարիքների համար որպես մարդասիրական օգնություն նախատեսվում է ձեռք բերել նոր AGG դիզելային գեներատորներ
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից հանգանակված միջոցներ
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արցախի Հանրապետություն, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 41,944,000 դրամ, որից Արցախի Հանրապետության կարիքների համար որպես մարդասիրական օգնություն թվով 3 հատ AGG դիզելային գեներատորների ձեռքբերում /2 հատը DE55D5 մակնիշի և 1 հատը C125D5 մակնիշի/՝ 16,428,000 դրամ, Արցախի Հանրապետության կարիքների համար որպես մարդասիրական օգնություն թվով 2 հատ AGG դիզելային գեներատորների ձեռքբերում /C11D5 մակնիշի/՝ 13,484,000 դրամ և Արցախի Հանրապետության կարիքների համար որպես մարդասիրական օգնություն թվով 2 հատ AGG դիզելային գեներատորների ձեռքբերում /C88D5 մակնիշի/՝ 12,032,000 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Արցախի Հանրապետության Կառավարություն
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ամբողջ ծրագրերը նախատեսվում է իրականացնել՝ 2021 թ. հունվարի 07-ից մինչև 2021թ. մարտի 08-ը:

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ժամկետում նախատեսվում է Արցախի Հանրապետության կարիքների համար որպես մարդասիրական օգնություն ձեռք բերել նոր AGG դիզելային գեներատորներ: Ծրագրերը նախատեսվում է իրականացնել՝ 2021 թ. հունվարի 07-ից մինչև 2021 թ. մարտի 08-ը: Արժեքը՝ 41,944,000 դրամ
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	AGG դիզելային գեներատորների ձեռքբերում՝ 41,944,000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ